

4 Pm

3-39722

4 AUG 2010  
478

3-39722

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՍ—ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ  
ՀԻՎԱՆԳԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԻՎՎՈՐՈՒՄ—ՈՐԿ.

ՀՐԱՀԱՆԳ  
ԴԱՇՏԱՅԻՆ ՄՎՆԵՐԻ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Г.П.Б. в Лигр  
А. 1934 г.  
Лит. № 120

632  
Z-99

22827

14.06.2013

Իրաներնից բարձրանց  
յեվ խմբագրեց  
ԽԱՁԻԿ ԶՈԼՅԱՆ



Սրբագրել է Սյվադյան: Հանձնվել է արտադրության  
ապրիլի 4-ին, ստորագրվել է ապագրելու ապրիլի 10-ին:  
Գլավիտ № 291, տիբաժ 3000, պատվեր № 274:

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՂՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԳՅԱՆ 50:

17715

632  
2-99

Հաստատված է ԽՍՀՄ-ի  
Հարժուգիտմի տեղակալ  
ընկ. ՄՈՒՐՍԼՈՎԻ կողմից:

«Յերկրորդ հնգամյալի կենտրոնական խնդիրը  
պետք է դառնա խորհունտեսական յեվ կոլտնտեսական  
գաշտերի բեքեատվության վնասկան բարձրացումը»:  
(Համ Կ (բ) Կ 17-րդ կոնֆերանս)

ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՄԵՐԱԿՈՂ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳԵՌՆԱՐԿՈՒՄ :  
ՆԵՐԻՑ ՄԵԿՆ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ—ՄԿՆԵՐԻ ԳԵՄ  
ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ

### 1. ՄԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՋԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՅՐԱԾ ՎՆԱՍԸ

«Մկներ» անվան տակ միացնում են մկնանման կրծող-  
ների բազմաթիվ խումբը՝ անային, բլրակային, գաշտային,  
համայնակյաց, սովորական, շեկագույն, տափաստանի չալ-  
պխուռիկը, խոմյակները (գերմանիկ մուկ) և այլն:

Մկնանման կրծողների (մկների) թված տեսակները  
տարածված են ամբողջ Միությունում. ամենից ուժեղ  
Ն. Վոլգայում, Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում,  
Միջին Վոլգայում, Ղազախստանում, Ադրբեջանում, Հայաս-  
տանում, Հարավային Սիբիրում և Ղրիմում:

Մկները չափազանց արագ են բազմանում: Եզերը  
տարվա ընթացքում ցգնում են մի քանի (5—6) անգամ  
6—8 հատ ձագուկներ, վորոնք իրենց հերթին 2—3 ամիս  
անց սկսում են նույնպես սերունդ արտադրել:

Մկներն ապրում են մի քանի անցք (յեղք) ունեցող  
փոշ խորը բներում և միշտ ընտանիքներով: Կլիմայական  
և սննդի բարենպաստ պայմաններում (մեղմ ձմեռ, տաք  
և չոր ամառ, առատ կեր), նաև վատ ազդրտեխնիկայի  
ու մկների դեմ պայքարի բացակայության դեպքում  
սրանք բազմանում են ահռելի քանակությամբ, ակոսելով  
գաշտերն իրենց բներով:

5600

ՊՈՒԿ. №

Ձմեռը մկները չեն քնում, այլ շարունակում են իրենց վնասարեք գործունեությունը ձյան տակը, ուր հողի մակերեսին փորփորում են իրենց անցքերը:

Դաշտային մկներն առաջին հերթին սպառնում են աշնանային և գարնանային ցանքսերին, նաև հացի ու անասնակերի պաշարներին, փորոնք պահվում են զեզերով դաշտերում, կալում և շտեմարաններում:

Մկները փաս են հասցնում բոլոր կուլտուրաներին՝ — դաշտային, այգեգործական, բանջարանոցային, Չերմոցային՝ բույսերի աճման ամբողջ ժամանակամիջոցում և մանավանդ հացաբույսերի հասունացման ժամանակ:

Աշնանը, ցուրտ և խոնավ յեղամակներն սկսվելուց, մկները դաշտերից գազթում են զեպի բնակելի վայրերը՝ զեզերը, կալերը և շտեմարանները:

Գյուղատնտեսությունը և շտեմարաններին հասցրած փեսից բացի, մկները վտանգավոր են նաև նրանով, վոր հանդիսանում են մի շարք տարափոխիկ հիվանդությունների տարածողները (չումա, տիֆ, զեզինտերիա, յերիզորդ և այլն):

Մկների զեմ պայքարի ձեռնարկումներն ստորաբաժանվում են՝ ագրոսեխնիկական (փորոնք կանխում են նրանց բազմացումը), մեխանիկական յեմ ֆիսիական:

## 2. ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՁԵՎԵՐԸ

Ագրոտեխնիկական ձեռնարկումների շարքին են դասվում նախ և առաջ պայքար մոլախոտերի զեմ, քանի վոր մոլախոտերով աղբակալված դաշտերը մկների բազմացման հիմնական պատճառն են հանդիսանում: Մոլախոտերը մկներին տալիս են առատ կեր և հիանալի կերպով պաշտպանում են բնական թշնամիներից:

Մոլախոտերի վոչնչացման համար պետք է ժամանակին անցկացնել ագրոտեխնիկական ձեռնարկումները — այն է՝ ֆաղհանը յեմ մաքուր ցելը:

Մոլախոտերի անմիջական վոչնչացումը կատարվում է նրանց այրելու միջոցով — այրման յենթակա տարածությունը գուլթանով նախարոք մի քանի անգամ (6—8) սկոսելուց հետո:

Մոլախոտերի միաժամանակյա այրման համար, դաշտում քամու կողմից գասավորում են չոր ծղնոտի կամ մոլախոտերի կույսեր, փորոնց վառում են միաժամանակ մի քանի տեղերում:

Այրումը կատարվում է հատկապես այդ նպատակով առանձնացված մարդկանց կողմից և հսկողություն է սահմանվում մինչ վերջնական այրվելը:

Բերքահավաքը պետք է կատարվի ճիշտ ժամանակին, իսկ բերքի բոլոր մնացորդները (տերևները, ցողունները, տարբեր բույսերի մնացորդները) պետք է հավաքել գաշտից: Յեթե այդ մնացորդները չեն կարող սղտագործվել տնտեսություն մեջ (սիլոսի համար), պետք է այրել նրանց:

Ձմռավարը պետք է կատարվի առանց բացուտների (отрехи) և հողի հետագա մանրակրկիտ վերամշակումով (խոշոր կոշտերի բացակայումը):

Դաշտային մկների բազմացումը նվազեցնելու տեսակետից կարեվոր գործոն է հանդիսանում նրանց բնական թշնամիների (աքիս, կատու, շուն և այլն) և գիշատիչ թռչունների (արծիվ, «ծիվ-ծիվ», բու և այլն) պահպանումը և նրանց զեպի մկներով վարակված տարածությունները ներգրավումը:

Գիշատիչ թռչուններին զեպի վարակված տարածությունները ներգրավելու համար, դաշտերում տնկում են նրանց թառելու համար ձողեր 2—3 մետր բարձրությամբ

և մեկ մետրանոց ձող հորիզոնական դրուժյամբ ամրացնում վերեվից:

Մզնոտի, խոտի և այլն բոլոր հին մնացորդները հանդիսանում են մկների բազմացման ոջախներ, ուստի, յեթե նրանք անտեսական արժեք չունեն, անհրաժեշտ է այրել: Այրելուց առաջ նրանց շուրջը առու յին փորում 60—70 սմ. խորությամբ, 60—70 սմ. հատակի լայնությամբ, իսկ վերեվից 40—50 սմ.:

Շանմարանները, պահեստները, կալատեղերը, դեզերը և նոր բերքի բարդոցները շրջապատվում են առուներով՝ մկների հարձակումը կանխելու համար: Առուների հատակում փորվում են ջրհորներ կամ թե դասավորում են հացահատիկյա թունավոր գրավչանյութ, պատրաստված նույն ձևով, ինչպես ընդունված է դաշտում մկների թունավորման համար: Առուներն ստուգվում են ամեն մեկ կամ յերկու օրը մեկ անգամ և այնտեղ ընկած մկներին վոչնչացնում:

Այդում կատարվող ազրոտեխնիկական ձեռնարկումներին են դասվում նաև մոլախոտերից մաքրելը, հին տեբևների և ցախի մնացորդների հեռացնելը և այլն, ծառերի միջի տարածությունը վարելը, կրակաթի լուծույթով և տարբեր հոտավետ նյութերի (նավթ, լիզոլ և այլն) խառնվածքով ծառերի բների քսելը, տաք օրերին ծառերի շուրջը յեղած ձյունը վտարով պնդացնելը, քանի վոր ամբացրած ձյունը հնարավորություն չի տալիս մկներին իրենց անցքերը փորել դեպի ծառերը:

Պայքարի մեխանիկական միջոցներից կիրառվում է զանազան ձևի թակարդներով մկանմաններին վորսալլման ամանավանդ լավ արդյունք են տալիս դուլը կամ տակառը շրջվող աախտակյա կափարիչով, վորի վրա ամրացնում են գրավչանյութը:

Վոչ պակաս դրական արդյունք են տալիս տակառը և դուլը, վորոնց ներսի պատերը ծածկվում են դայթակղիչ նյութով (ճարպ, խմոր և այլն):

Գործադրվում են նաև ջրով լցրած տակառներ, վորոնց յերեսին «քյոզար» (ПОЛОБО) յեն շաղ տալիս: Լավ արդյունք ստանալու համար «քյոզարի» վերեր, առանձին տախտակի վրա, կարելի յե դնել նաև գրավչանյութ:

Թված մեխանիկական ձևերով դեռ չեն սպառվում իրականում գոյություն ունեցող մեխանիկական պայքարի բազմազան միջոցները, վորոնք լայն կերպով պետք է ոգտագործվեն

### 3. ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Դաշտային մկներին վոչնչացնելու ամենապարզ և հուսալի միջոցն է հանդիսանում մկնդեղաթթվային նատրիումով (նատրիումի արսենիտ) կամ սալիտակ մկնդեղով թունավորված թխած հացը, հացահատիկը, միսը, ձուկը, բանջարը կամ միջրը նրանց բներում դնելը:

Այդ նյութերով թունավորված գրավչանյութը ուսույուց դաշտային մկները մի քանի ժամ անց սատկում են.

2. Մկներն ուտում են թխած հացի բոլոր տեսակները, բայց ամենից շատ գայթակղվում են ցորենի և տարեկանի հացով: Գրավչանյութի համար հացը պատրաստելիս պետք է հեանել, վոր ալյուրը բորբոսնած, դառնացած կամ վորեե կերպ թրջված չլինի:

3. Հացի թունավորումը հետևյալ կերպ է կատարվում:  
ա) Մեկ բաժակ մանրացրած (փոշի դարձրած) մկնդեղաթթվային նատրիումը լուծում են նույնպիսի 30 բաժակ տաք ջրում: Վորպեսզի գրավչանյութն ավելի դայթակղիչ լինի (մանավանդ այն վայրերում մկներին թունավորելու,

ուր նրանք առատ և լավ կեր ունեն), ցանկալի յե ստացված լուծույթին ավելացնել շաքար, մեղր, շիրա կաս դոշաք՝ թույնին հավասար քանակութեամբ:

բ) Թխած հացը կտրատում են մանր կտորներով՝ վոչ մեծ քան անտառի ընկույզը: 400 գրամ լավ թխած հացից պետք է ստացվի 800—1000 կտոր:

գ) Կտրատած հացը դասավորում են մաղի վրա և 1—2 բոպեյով թաթախում (ընկղմում) թույնի լուծույթով ամանի մեջ, այնուհետև մաղը բարձրացնում են ու պահում այնքան, վորպեսզի ավելորդ հեղուկը հեռ քամվի ամանի մեջ:

Այնուհետև թունավորված հացը տեղավորում են փոքրիկ դուլյերի մեջ՝ մկների բները թունավորող բանվորներին բաժանելու համար:

4. Հացահատիկի թունավորումը կատարվում է հետևյալ ձևով՝

ա) ցորենի, տարեկանի, վարսակի կամ յեզիպտացորենի հատիկները 24 ժամով թաթախում են (ընկղմում են) մկնզեղաթթվային նատրիումի կամ սպիտակ մկնզեղի ջրային սառը լուծույթում (1 մաս թույնը 20 մաս ջրի մեջ), խառնելով 4 ժամը մեկ անգամ: Յեզիպտացորենի և վարսակի հատիկները թունավորելուց առաջ անհրաժեշտ է թեթև կերպով ջարդել:

բ) Հատիկները, 24 ժամյա թրջելու փոխարեն կարելի յե թունավորել մկնզեղաթթվային նատրիումի նույնպիսի ջրային լուծույթում 30—40 բոպեյի ընթացքում յեռացնելով:

գ) Թունավորելուց հետո հատիկները թեթևակի չորացվում են ու այնուհետև գործադրվում մկների բներում կամ ծղնտի գրավիչ կույտերում դասավորելու համար:

5) Մսից, ձկնից, զանազան բանջարեղենից և մրգերից

պատրաստած գրավչանյութը գործադրվում է մկներին գլխավորապես շենքերում, դեզերում և բարդոցներում թունավորելու համար: Բանջարեղենը և միրգը մանր կտրատում են և թրջում (ինչպես և հացահատիկը) թունավոր լուծույթի մեջ 24 ժամվա ընթացքում:

Միսը և ձուկը գործածվում են ֆարշի ձևով, վորի համար նրանց անց են կացնում մսի մեքենայով կամ դանակով մանր կտրատում: Մանր ձուկը կարելի յե ոգտապործել առանց կտրատելու: Մսեղեն և ձկնեղեն ֆարշից գրավչանյութը պատրաստում են սպիտակ մկնզեղով, վորից՝ մեկ կիլոգրամ գրավչանյութի համար վերցնում են 100 գրամ կամ անխաթիվային բարիումով, վորից մեկ կիլոգրամ գրավչանյութի համար վերցնում են 125 գրամ: Այդպիսի դեպքերում պատրաստած ֆարշը մանրակրկիտ կերպով խառնում են հիշյալ թույնների հետ:

Գեղերի, պահեստների, շտեմարանների և շենքերի թունավորումը կատարվում է փոքր արկղների միջոցով՝ մոտավորապես  $40 \times 10 \times 10$  սանտիմ. ծավալով: Այդ արկղների պատերում 3—4 սմ. տրամագծով ծակեր են պատրաստում: Գրավչանյութը տեղավորում են արկղի մեջ. ցանկալի յե նման դեպքերում գրավչանյութը վերցնել շատ մանրացրած կամ ճիւղած ձևով ախ հաշվով, վորպեսզի մկները չհարողանան դուրս տանել այն:

Գրավչանյութով արկղները դասավորում են դեզերի մեջ տարբեր տեղերում, պատերից վոչ պակաս քան կես մետր խորութեամբ և տարբեր բարձրութեամբ: Արկղներն ստուգում են ամեն օր, բոլոր թունավորված մկներին հանում և թաղում են հողում, իսկ գրավչանյութը նորոգվում է:

6. Գեղերում, պահեստներում և այլ շենքերում մկներին վոչնչացնելու համար, յերբ վարակվածությունն ուժեղ

չափի յե հասել, բացի թունավոր գրավչանյութերի յեղանակից, կարող է կիրառվել նաև քլորպիկրինով թունավորումը:

Քլորպիկրինով մշակած ծղնտաի և խոտի դեզերը պիտի ոգտագործել տնտեսության մեջ վոչ շուտ քան թունավորումից 10—15 օր անց և այն ել մանրակրկիտ ոգափոխությունից հետո, մինչև քլորպիկրինի հոտի խալառ անհետանալը: Չկալոված դեզերը, վորոնցից ստացվելիք հատիկները հատկացվելու յեն ցանքսի համար, չի կարելի մշակման յենթարկել քլորպիկրինով, քանի վոր վերջինս բացասաբար է ազդում սերմերի ծլունակության վրա:

Քլորպիկրինով դեզերի թունավորումը կատարվում է հետևյալ կերպ. դեզի մեջ, տարբեր բարձրությամբ հաստ փայտով (ցից) անցքեր են գոյացնում, վոչ պակաս քան կես մետր խորությամբ: Այդ անցքերի մեջ են դնում քլորպիկրինով թաթախած (թրջված) բամբակի գնդիկները կամ չորացրած կովի թրիք, աթար և այլն: Քլորպիկրինը կարելի յե ներսրսկել և հեղուկ վիճակում, շալակի «ավտոմաքս» և «տրեմասս» սրսկիչ մեքենաների միջոցով: Դեզերի թունավորման դեպքում քլորպիկրինի դոզան հաշվում է 10—15 գրամ, խոտի կամ ծղնտաի մեկ խորմետրի համար: Քլորպիկրինով թունավորելուց առաջ դեզերի կամ բարդոցների շրջապատում առուններ պետք է փորվի: Դեզերը թունավորումից հետո պիտի ցանկապատել:

Շենքերում և պահեսաներում քլորպիկրինով թունավորելուց առաջ պետք է պայմաններ ստեղծել, վորպեսզի արգելվի գազի դուրս գնալը: Իրա համար սվաղում կամ փակում են բոլոր ձեղքերը և անցքերը, բացի մկնների բներից: Քլորպիկրինը լցնում են սաղր ափսեների մեջ, վորոնք տեղավորվում են տարբեր բարձրության վրա և տարբեր տեղերում: Քլորպիկրինը վերցնում են 10 գրամ

շենքի ամեն մի խոր. մետրի համար: Վորպեսզի քլորպիկրինը լավ գոլորշիանա (գազանա), հարկավոր է ախտահանվող շենքի ջերմությունը հնարավորթյան սահմաններում հասցնել մինչև 18—20 աստիճան Յելսիուսի: Գազացումից առաջ շենքից պետք է դուրս տարվեն այլուրը, հացահատիկը (յեթե սերմացու յե) և թթու գրած բանջարեղենը: Գործողությունը կատարելուց 12—36 ժամ անց՝ շենքն ոգափոխում են (վենտիլյացիայի յենթարկում), մինչև քլորպիկրինի ամենաաննշան հոտի անհետանալը:

7. Գրմիական նյութերի հետ բոլոր գործողությունների դեպքում անհրաժեշտ է հիշել, վոր նրանք թունավոր են: Մարդկանց և անային կենդանիների թունավորման հնարավոր դեպքերից խուսափելու համար պետք է ձեռք առնել զգուշության բոլոր միջոցները: Աշխատանքից հետո և ուտելուց առաջ ձեռքերը մաքուր լվանալ սապոնով: Աշխատանքի մեջ գործածել մետաղյա կամ ապակյա ամանեղեն: Աշխատանքից հետո ամանեղենը պետք է հիմնովին լվանալ տաք ջրով և սապոնով: Փայտյա ամանեղենը դժվար է մաքուր լվանալ, ուստի աշխատանքից հետո հարկավոր է այդպիսիները դեն գցել: Փակ շենքերում քլորպիկրինով աշխատելիս անհրաժեշտ է միշտ հակազազ գործածել:

Բրիզագավարը պարտավոր է հետևել, վոր զգուշության կանոնները կիրառվեն:

8. Իաշտում մկնների վոչնչացման աշխատանքները պետք է սկսվեն վաղ գարնանից՝ ձյան հալվելուց անմիջապես հետո և մինչև խիստ բուսականության առաջանալը: Աշնանը, բուսականությունը չորանալուց հետո, այդ աշխատանքները նորից ծավալվում են և շարունակվում մինչև ձյան ծածկելը, ըստ վորում հատուկ ուշադրություն

ե դարձվում զեզերում, կախտեղերում, բերքի պահպանման այլ վայրերում ու շենքերում կատարվող աշխատանքներին:

Աշնանը մինչ ձյուն գալը և վաղ գարնան, հենց վոր ձյունը վերանում է, բոլոր դաշտերը պետք է մանրամասն հետազոտվեն ու պարզվեն միջերով վարակված բոլոր տարածութիւնները, վարակման խտութիւնը և նրանց անհատ կուտակվելու տեղերը: Պետք է պարզել բանվորական ուժի, անհրաժեշտ քիմիական թույնների և գրավիչ նյութերի պահանջը, նաև պետք է ծավալել մասսայական բացատրական աշխատանք խորհրդատեսութիւնների բանվորների, կուլտեստականների և մենատեստեսների մեջ:

9. Թույնների և գրավիչ նյութերի պահանջը վորոշելու համար պետք է յեղնել հետեյալ հաշվից. յերբ մեկ հեկտար տարածութիւն վրա միջերի վարակման խտութիւնը 1000 բնի յե հասնում, այդ դեպքում պահանջվում է 15 գրամ միջդեղաթթվային նատրիում (կամ սպիտակ մկրնդեղ), 400 գրամ թխած հաց (կամ մեկ կիլո հացահատիկ):

Բանվորական ուժը հաշվում են՝ յեղնելով հետեյալ որինակից. մեկ հեկտարի խտութիւնը 500 բնի հասնելու դեպքում՝ 1 բանվորական օրում 4 հեկտար, մինչև 1000 բուն մեկ հեկտարի վրա խտութիւն դեպքում՝ 1 բանվորական օրում 3 հեկտար, իսկ 1000-ից բարձր բների դեպքում, 2 հեկտար:

10. Վորպեսզի ավելորդ մթերքներ և թույն չծախսվի, պետք է թունավորել միմիայն բնակելի բները: Բնակելի բներն վորոշում են հետեյալ կերպ. թունավորումից մեկ օր առաջ վարակված տարածութիւն վրա յեղած բոլոր բներն առանց բացառութիւն վորաքով ծածկում են (հողով), հետեյալ օրն անցքերի մի մասը բացվելու յեն, ահա դրանք են բնակելի բները: Դրանցից յուրաքանչյուրի մեջ պետք է գցել մեկ կտոր թունավորված հաց: Բների ծած-

կելը (վորքերով կոխրտելը) պետք է կատարել այս կերպ. բանվորական բրիգադները շարվում են ուղիղ գծով, իրարուց 2—3 մետր հեռավորութիւն վրա և շարժվելով մեկ ուղղութիւնմբ, հաստ ձեռնափայտով փակում կամ վորքով ծածկում են հանդիպող բոլոր միջերի բները:

11. Թունավորումը պետք է կատարել բները ծածկելու հետեյալ օրն այս կերպ. բոլոր թունավորող բանվորները իրենց հետ պետք է ունենան դուլեր, լցած թունավոր գրավչանյութով: Հավասար շարքերով շարժվելիս, նրանք իրենց շարժման ճանապարհին հանդիպած ամեն մեկ բնում գցում են մեկական կտոր թունավորված հաց (կամ մոտ 2 գրամ հացահատիկ):

Գրավչանյութը ուտելուց մի քանի ժամ անց մուկը սատկում է, ըստ վորում մեծ մասամբ մահը տեղի յե ունենում բնում: Վորպեսզի ստուգել պայքարի արդյունքները, անհրաժեշտ է թունավորած հողամասի մի մասում ստուգման ընտրովի կարգով յերկու օր հետո վորքով կոխրտել (ծածկել) բները: Յեթե նրանք չբացվեն, նշանակում է միջերը սատկել են:

Հակառակ արդյունքի դեպքում, բների թունավորումը պետք է կրկնել:

12. Մեծ տարածութիւններ թունավորելիս՝ բրիգադաները և ջոկատները պետք է համաձայնեցված աշխատեն, մեկ միասնական պլանով, տնտեսութիւն ազրոնումբ կամ պայտաթի մեքենակայանի (ՄԻՍ) տեխնիկական պերսոնալի (տեխնիկի, մասնագետի) ընդհանուր ղեկավարութիւնմբ:

13. Նախ քան աշխատանքի անցնելը, բրիգադավարը պետք է հող տանի յուր բրիգադան ապահովի բավական քանակութիւնմբ պատրաստի թունավոր գրավչանյութով, ամանեղենով (վորոնց մեջ յուրաքանչյուր բանվոր աշխատանքի ժամանակ կրելու յե թունավոր գրավչանյութը) և այլն ապահովելու մասին:

14. Մկներին փոխչացներուց հետո, խորհանուսու-  
թյունում և կոլտնտեսությունում պետք է մարդիկ առան-  
ձնացվեն, փորոնց պետք է հանձնարարվի մկներին մաքրած  
տարածությունների հսկողությունը: Յեթե այդ տարածու-  
թյունների վրա նորից հայտնաբերվեն գեթ ամենաքիչ  
քանակությամբ մկներ, անհրաժեշտ է նրանց անմիջապես  
թունավորել, քանի վոր հակառակ պարագայում մկները  
կարող են արագորեն բազմանալ:

15. Մկների վտանգը շատ մեծ է վորպեսզի աշնանա-  
ցանը և հացի պաշարները նրանցից պաշտպանվեն, պետք է  
ճիշտ և ժամանակին պայքար կազմակերպել բոլոր տեղ-  
նիկական պահանջների կիրառման համար և լիովին ապա-  
հովել մկների գլխովին բնաջնջումը:

Բրիգադաներն իրար միջև մրցում կազմակերպելով,  
պետք է հարվածախորեն աշխատեն: Պաշր-Ավիաքիմի, կոմ-  
սամոլի բջիջները և ամբողջ հասարակայնությունը տեղե-  
քում բերքի պաշտպանության այդ կարեւոր գործին պետք  
է հատուկ ուշադրություն դարձնեն, այդ գործի համար  
կազմակերպելով խորհանուսությունների բանվորներին և  
կոլտնտեսականների ու մենատնտեսների լայն զանգված-  
ները:

Մկների գեմ պայքարի աշխատանքները պետք է տար-  
վեն ՌԲՎ-ի Պայքարի Մեքենակայանների (ՄԻՍ) և նրա  
արտադրական կայանների մասնագետների ղեկավարու-  
թյամբ:

Սորհանուսությունները, կոլտնտեսությունները,  
ՄՏԿները և մենատնտեսները, պայքարի կազմակերպման  
տեխնիկայի, թույների գնման և այն բոլոր հարցերով պետք  
է զիմեղ գյուղատնտեսության յեվ անհառի վնասատուների  
դեմ պայքարի Համամիութենական Միավորման ՌԲՎ-ի  
մոտակա պայքարի մեխենակայանին (ՄԻՍ) կամ հրա-  
հանգչական կայանին:



17718

13-3972a

201



**Народный Комиссариат Земледелия С. С. С. Р.  
ИНСТРУКЦИЯ ПО БОРЬБЕ С МЫШАМИ**

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ